

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆՈՐ  
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ԱՅԼԸՆՏՐԱՆՔ հետազոտական կենտրոնի ղեկավար

Բանալի բառեր. միտումներ, ֆինանսական շուկա, տարածաշրջանային  
խմբավորում, ազգային տնտեսություն, ճգնաժամ

Ազգային տնտեսության կայացման համար կարևոր նշանակություն ունեն ինչպես տարածաշրջանային և գլոբալ զարգացումների սթափ վերլուծություններն, այնպես էլ, ապագայի հնարավոր միտումների կանխատեսումները: Ընդհանուր առմամբ, գլոբալ տնտեսության հեռանկարների հետ կապված ակնկալիքները կարող են ավելի դրական լինել՝ միջազգային նոր տրնտեսակարգի ձևավորման և կայացման պարագայում: Միաժամանակ ակնհայտ է դառնում, որ ներկայումս պարենային շուկայում, էներգետիկ շուկայում և ապրանքային այլ շուկաներում տեղ գտած ժամանակավոր մշտումները կարող են հանգեցնել առավելագույնը միանիշ թվով զարգացումների՝ ինչպես ազգային տնտեսություններում, այնպես էլ համաշխարհային առևտրում: Միջազգային ֆինանսական շուկայի զարգացումները մեծապես պայմանավորված կլինեն ոչ միայն հիշյալ միտումներով, այլև միջպետական կարգավորման նոր մեխանիզմների կիրառմամբ: Իսկ ներքին շուկաներում անհրաժեշտություն կառաջանա բարելավելու ֆիսկալ դիրքերը, մեղմելու ինֆլյացիան, ավելացնելու միջազգային արժույթային ռեզերվները, ֆինանսական շուկաների զարգացումները համապատասխանեցնելու տնտեսական քաղաքականության առաջնահերթություններին և անհրաժեշտության դեպքում աջակցելու ներքին շուկայի պահանջների բավարարմանը: Հետևելով տարածաշրջանային տնտեսական միտումներին, կարելի է նկատել, որ տեսանելի հեռանկարում ապրանքային շուկաների համեմատ ակնկալվում է ծառայությունների ոլորտի արագանցիկ աճ՝ ազգային տնտեսություններում կարճաժամկետ ապակայունացնող շոկերի պայմաններում:

Ակնհայտ է, որ գլոբալ միտումները կարիք ունեն ավելի մանրակրկիտ քննարկման, ինչը թույլ կտա ոչ միայն կանխատեսել վերջիններիս ազդեցությունը ազգային տնտեսության աճի տեմպերի վրա, այլև դարձնելու տրնտեսական ցիկլերն ու դրա առանձին փուլերն առավել կանխատեսելի և կառավարելի: Հետևաբար, կարևոր է ուշադրությունը կենտրոնացնել այն տարածաշրջանների վրա, որոնք առավել առանցքային դեր ունեն համաշխարհային տնտեսության զարգացման գործում:

Մասնավորապես, մեծ է Հյուսիսային Ամերիկայի, Ճապոնիայի և Արևմըտյան Եվրոպայի տնտեսությունների դերը, որոնք, ըստ էության, մինչ գլոբալ ֆինանսական ճգնաժամը բնութագրվում էին տնտեսական զարգացման համադրելի մակարդակներով և զարգացման ընդհանուր միտումներով: Այս առումով ընդհանրական կարելի է համարել նաև հիշյալ երկրներում նորարարություններով պայմանավորված տնտեսությունների զարգացումը, որն ավելի սուր բնույթ է հաղորդում տնտեսական մրցակցությանը:

Ինչ վերաբերվում է Չինաստանին, ապա այս երկիրը ձևավորում է համաշխարհային տնտեսության ուժի նոր կենտրոն՝ միաժամանակ ամրապնդելով առևտրատնտեսական հարաբերությունները հարևան երկրների տնտեսությունների հետ, հետևաբար նպաստելով սեփական դիրքերը գլոբալ մասշտաբով: Բացի այդ, հարկ է նկատել, որ անցնող տարիներին Չինաստանի ներքին և արտաքին տնտեսական քաղաքականությունն ավելի ճկուն էր՝ համետած այլ երկրների հետ ինչպես գլոբալ ֆինանսական ճգնաժամի ընթացքում, այնպես էլ դրանից հետո:

Կանխատեսելի է նաև այն իրողությունը, որում աստիճանաբար կփոխվի առավարության դերը որպես տեղական արտադրության կառավարման հովանավորի և տարածաշրջանային անվտանգության երաշխավորի: Այն ավելի ամենաշատ կգնահատվի միջազգային մակարդակով՝ զիջելով դիրքերը ներքին տնտեսական միջամտությանը: Մօուս կողմից, կառավարության միջամտությունը կարող է լինել ավելի հաճախակի, հատկապես այն դեպքում, երբ ոչ մի այլ՝ լիբերալ կամ նեոլիբերալ մեթոդներով և ազատ շուկայական մոդելների կամ „անտեսանելի ձեռք“-ի սկզբունքով հնարավոր չլինի նպաստել առողջ մրցակցությունը:

Տարածաշրջանային մակարդակում ազգային կառավարությունները կարող են գիտակցել տարածաշրջանային խնդիրների համատեղ հանգուցալուծման անհրաժեշտությունը և մտահոգությունների և գործառույթների հնարավոր փոփոխությունը գլոբալից տարածաշրջանային: Ներքին տնտեսական վերակառուցման գործընթացը կարող է շարունակվել միջազգային նոր տնտեսակարգի ստեղծմանը զուգահեռ:

Ազգային տնտեսություններն առաջիկա տարիներին կշարունակեն ապրանքային արտադրությունից անցում կատարել դեպի սպասարկման ոլորտ և ծառայությունների մատուցում: Միաժամանակ, առավել հաջողակ կարող են լինել տեղեկատվության, առաջավոր տեխնոլոգիաների, գիտելիքների ու նորարարությունների վրա հիմնված ընկերությունները, որոնք կվերաբաշխեն առկա ազգային ռեսուրսները և կվերահսկեն վերամշակվող արդյունաբերության զգալի հատվածները:

Ինչ վերաբերվում է գլոբալ տնտեսությանն, ապա այն ենթակա է նոր ֆինանսական ճգնաժամերի՝ նույնիսկ առաջին և երկրորդ ալիքների հաղթահարումից հետո: Սակայն մեծապես կոծվարանա մինչճգնաժամային տնտեսական հզորությունը վերականգնելու գործընթացը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1997-1998թթ. ֆինանսական ճգնաժամն իր անդրադարձն ունեցավ 2008-2010թթ. ճգնաժամի վրա, որի արդյունքում և սահմանափակ աղդեցությամբ գլոբալ տնտեսությունում աճեցին նաև նավթի գները: Այնուհանդերձ, տնտեսական ազատականացումը և գլոբալացումը հանգեցրել են որոշակի ռիսկերի: Բազմաթիվ հեղինակավոր փորձագետների կարծիքով տնտեսական ճգնաժամը կարող է կրկնվել: Տարածաշրջանային և գլոբալ շուկաներում նկատվող ներկայիս միտումներին կարող է հետևել նաև ֆինանսական շուկաների ապակայունացումը, որի պայմաններում անգամ չեն նվազի առանձին երկրների մրցակցային առավելությունները բացահայտելու և դրանք իրացնելու հնարավորությունները գլոբալ շուկաներում:

Ի լրումն շատ երկրների բանկային կառույցների կստեղծվեն նաև նորերը՝ տնտեսության կայուն զարգացման համար: Առանձին տնտեսություններում առկա տատանումներն ու ցնցումները, աճող փոխկախվածությունների և փոխպայմանավորվածությունների պատճառով, կազդեն նաև այլ տնտեսությունների վրա: Աճող առևտուրը և ֆինանսական գլոբալ շուկաները անմիջականորեն կազդեն տարածաշրջանային տնտեսության վրա<sup>1</sup>:

Միջազգային նոր տնտեսակարգի ձևավորման և դրան առնչվող կանոնակարգերի մասին քննարկումները հաճախակի են դարձել ոչ միայն զարգացող երկրներում, այլև այնպիսի հեղինակավոր ֆորումներում, ինչպիսիք են Դավոսը Ուիլթըն Պարկը և այլն: Վերջին ֆինանսական ճգնաժամը բացահայտեց նաև տարբեր երկրների միջև գլոբալ ֆինանսական կախվածությունը: Որպես զարգացող շուկայի բաղադրիչներ, բազմաթիվ երկրներ շարունակում են աճել և ձգտում են ավելի որոշիչ ձայնի՝ միջազգային տնտեսական կազմակերպություններում: Մի շարք հարցերի հանգուցալուծման համար պահանջվող կոնսենսուսի բացակայությունը կարող է ժամանակ առ ժամանակ խաթարել ֆինանսական շուկաների աճը:

Քանի որ ազգային տնտեսություններն ամբողջ աշխարհում ավելի փոխկապակցված են, արհեստական խոչընդոտների վերացումը բոլոր երկրներին առավել արդար առևտրի և համատեղ ծրագրերի իրականացման համար լավ հնարավորություն կտա լինելու „հաղթող - հաղթող“-ի կարգավի-

---

<sup>1</sup> Ինչպես օրինակ, Ռուսաստանի կողմից Բրազիլիային և Արգենտինային գազի մատակարարումների տատանումները 1998թ.-ին զգալիորեն ազդեցին ԱՄՆ-ի սպառման շուկաների վրա:

ճակուն՝ շնորհիվ համագործակցային առավելությունների արդյունավետ օգտագործման: Այսօր համաշխարհային տնտեսությունը գտնվում է անհամեմատ ավելի դինամիկ զարգացման մեջ, ինչը ենթադրում է տարբեր երկրների և տարածաշրջանային միավորումների փոխհամաձայնեցված գործողություններ՝ տնտեսական անվտանգության և կայուն աճի ապահովման նպատակով: Դա, իր հերթին, թույլ կտա համաշխարհային տնտեսական աճը վերադարձնել այն բարձր մակարդակին, ինչպես օրինակ, այն եղել 1960թ. կեսերին և 1970 - ականների սկզբին: Մասնավորապես, աճի դինամիկան կարող է լինել ուժեղ զարգացող շուկաներում, հատկապես BRICS պետություններում և բազմաթիվ զարգացող երկրներում, ներառյալ Հայաստանում, Վրաստանում և Իրանում: Անցյալի փորձը վկայում է, որ հիշյալ տարիներին համաշխարհային տնտեսության բարձրացող ալիքը ստեղծեց բազմաթիվ տնտեսական առաջատարների՝ Գերմանիա, Ճապոնիա և այլ երկրների, բայց դա չի բնավ չվերացրեց սոցիալական բնույթի խնդիրները. աղքատությունը մինչ օրս չի նվազում անգամ 1% - ով: Նույնիսկ այն բանից հետո, երբ 1996թ. ՅՈՒՆԵՍԿՈՒՄԻ գազաթափողովում, որտեղ պետությունների ղեկավարները պարտավորվեցին նվազեցնել աղքատությունը կիսով չափ մինչև 2015թ., դա այդպես էլ տեղի չունեցավ: Ավելին, այն աճում է և որոշ երկրներում աղքատությունը համարվում է անվերահսկելի ու անհաղթահարելի միտում: Եթե նախորդ դարի սկիզբին բազմաթիվ մարդկային կորուստներ եղան քաղաքական հակամարտությունների հետևանքով, ապա 21-րդ դարը բազմաթիվ փորձագետներ բնութագրում են որպես տնտեսական աճի նորարարական ոչնչացում:

Հաշվի առնելով գլոբալ ֆինանսական ճգնաժամից հետո տեղ գտած համաշխարհային տնտեսության հիմնական միտումները, կարևոր են ապագային միտված հետագա զարգացումների կանխատեսումները, որոնք կօգնեն ճիշտ դիրքավորվելու ազգային տնտեսություններին՝ արդյունավետ օգտագործելու առկա ռեսուրսները: Սակայն փորձը վկայում է, որ բոլոր կանխատեսումներից որոշում կայացնող շրջանակները, որպես կանոն, հակված են ընտրել մեկ մեզա նախագիծ կամ լավատեսական, կամ հոռետեսական սցենարով: Կա ակնհայտ անհրաժեշտություն՝ տեսնելու զարգացման այլընտրանքային ուղիներ և այլ հնարավոր սցենարներ՝ ելնելով նրանցից յուրաքանչյուրի վրա գլոբալ փոփոխությունների ազդեցություններից: Ընդամին, հաշվի առնելով միջազգային կառույցների և փորձագետների տարբեր տեսակետները, նպատակահարմար է քննարկել հետևյալ սցենարները, որոնք ուրվագծում են համաշխարհային տնտեսության ապագան: Ըստ որում, յուրաքանչյուր սցենար ներառում է քաղաքական համապատասխան ուղղվածություն՝ ընդգծելով առանցքային անորոշությունները, խաթարումները և

հավանական իրադարձությունները, ինչպես նաև կարևորագույն մարտահրավերների բացահայտումները:

Առաջին սցենարը կարող է սահմանվել որպես ինքնուզուզի գլոբալացում: Ջարգանում են տեխնոլոգիական, տնտեսական, ժողովրդագրական գործոնները և արդյունավետ կառավարումը, որը թույլ է տալիս մարդկության մի մասին օգտվել գլոբալացման տեխնոլոգիական զարգացումից, ինչի արդյունքում աշխարհի տարբեր ծայրերում որոշ դեպքերում բնապահպանական խնդիրները վերածում են ճգնաժամերի՝ ծանր վնաս հասցնելով ինչպես առողջությանն, այնպես էլ տնտեսությանն ընդհանրապես: Միաժամանակ, գլոբալ տնտեսական կայուն աճը խթանվում է տնտեսական հետագա ազատականացմամբ, ուժեղ քաղաքական կոնսենսուսի առկայությամբ, իսկ միջին խավի աշխատանքով ձեռք բերված ազգային հարստության ավելացումը տարբեր երկրներում որոշակիորեն մեղմացնում է բազմաթիվ ժողովրդագրական, ինչպես նաև ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրները: Կառավարումն ավելի արդյունավետ է դառնում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Շատ երկրներում վերարժևորվում են պետության դերը և գործառույթները, որակապես նոր մակարդակի է հասցնվում պետություն - մասնավոր հատված գործընկերությունը, խորանում է գլոբալ համագործակցությունը՝ համատեղ ծրագրերի և տարբեր միջազգային միջոցառումների միջոցով: Հակամարտությունները հասցվում են նվազագույնի՝ ընդհանուր շահերի գիտակցությամբ, ինչը պետություններին թույլ է տալիս առավելագույնս օգտվել գլոբալացումից: Աշխարհի բնակչության մի ստվար հատված՝ Աֆրիկայում, Միջին Արևելքում, Կենտրոնական ու Հարավային Ասիայում և հետխորհրդային տարածաշրջանում չեն կարողանում լիարժեքորեն օգտվել այդ դրական փոփոխություններից, ինչը ներքին հակամարտությունների հետ միասին ստիպում է այդ երկրները մնալ զարգացման համեմատաբար ցածր մակարդակներում:

Կործանարար գլոբալացումը կարող է լինել հաջորդ սցենարը: Գլոբալ էլիտաները մեծանում են, սակայն աշխարհի բնակչության մեծ մասը չի օգտվում գլոբալացումից: Բնակչության աճը և ռեսուրսների անհամաչափ բաշխումը ծանր բեռ են դառնում բազմաթիվ զարգացող երկրների համար, իսկ ապօրինի միգրացիոն հոսքերը միջպետական լարվածության հիմնական աղբյուր են դառնում: Բարձր տեխնոլոգիաները ոչ միայն չեն նպաստում զարգացող երկրների խնդիրների հանգուցալուծմանը, այլև վերազգային կորպորացիաների կողմից օգտագործվելով, հանդես են գալիս որպես բացասական գործոն՝ դուրս մղելով տեղական արտադրությունը և դառնալով տնտեսության ապակայունացման զենք: Համաաշխարհային տնտեսությունը բաժանում է երեք մասի. զարգացած երկրներում շարունակվում է տնտեսական առաջընթացը, շատ զարգացող երկրներ զրկվում են տնտեսա-

կան անկախությունից, որի արդյունքում աճում է ստվերային տնտեսությունը: Միաժամանակ, զարգացող երկրների կառավարությունները չեն կարողանում ամրապնդել դիրքերը ազգային և միջազգային մակարդակներում:

Այս ամենը ենթադրում է տնտեսական և քաղաքական իրողությունների խորը մասնագիտական վերլուծություն, սեփական ռեսուրսների իրատեսական գնահատում, ինչպես նաև տնտեսության զարգացման ազգային մոդելի ձևավորում՝ հաջողությամբ դիմակայելու գլոբալ մարտահրավերները և արդյունավետ իրացնելու ազգային մրցակցային առավելությունները ժամանակակից աշխարհում:

### **Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

#### **Տարածաշրջանային և գլոբալ զարգացումները նոր իրողությունների և ապագայի ակնկալիքների համատեքստում**

*Բանալի բառեր, միտումներ, ֆինանսական շուկա, տարածաշրջանային խմբավորում, ազգային տնտեսություն, ճգնաժամ*

Ազգային տնտեսության կայացման համար կարևոր նշանակություն ունեն ինչպես տարածաշրջանային և գլոբալ զարգացումների սթափ վերլուծություններն, այնպես էլ, ապագայի հնարավոր միտումների կանխատեսումները: Ընդհանուր առմամբ, գլոբալ տնտեսության հեռանկարների հետ կապված ակնկալիքները կարող են ավելի դրական լինել՝ միջազգային նոր տրնտեսակարգի ձևավորման և կայացման պարագայում: Միջազգային ֆինանսական շուկայի զարգացումները մեծապես պայմանավորված կլինեն միջպետական կարգավորման նոր մեխանիզմների կիրառմամբ:

### **Tatoul MANASSERIAN**

#### **Regional and global developments in the context of new realities and expectations**

*Key words: trends, financial market, regional block, national economy, crisis*

Given the major trends in today's world economy, particularly after global financial crisis, forecasts on further developments are feasible. However, all projections may prone to failure in selecting one mega projection based on either optimistic or pessimistic grounds. There is an obvious need to see alternative ways of development and feasible scenarios with the assumption of global changes in each of them.

### **Татул МАНАСЕРЯН**

#### **Региональные и глобальные перемены в контексте новых реалий и ожидаемой**

*Ключевые слова: тенденции, финансовый рынок, региональный блок, кризис*

Общий вывод заключается в том, что в перспективе мировая экономика выгледет лучше в случае создания нового экономического порядка. В то же время все еще существуют некоторые неопределенности. Мы можем сделать вывод, что в ближайшие десятилетия текущие тенденции на пять процентов больше окажут воздействие на внешний фронт, обеспечивая более широкий доступ к международным финансовым рынкам. Формирующийся глобальные тенденций требуют тщательного рассмотрения.